ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 17

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

<u>Հիմնական օբյեկտների համար</u>

1)Մինչև 300 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական(ամառային)տների,ինչպես նաև 200 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական օբյեկտների համար 7500 դրամ:

2)Սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա.201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ:

բ.501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ:

գ.1001-ից 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000դրամ:

դ.3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝100000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000դրամ:

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,արդիականացման աշխատանքների/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ:

2/բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի ,կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

3/նախատեսվումէ միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինարարությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

<<1>>,<<2>>,<<3>> կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ:

2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5.Համայնքի տարածքում

1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ յուրաքանչյուր քմ 200դրամ:

2)համայնքի տարածքում հեղուկ վառելիքի ,սեղմված ,բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրացված առևտրի կետերում,հեղուկ վառելիքի և (կամ)սեղմված,բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանվում է 150000դրամ:

3)համայնքի տարածքում գտնվող խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանվում է 40000դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրային այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՅՈՒԼԱԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ ԿԱՐՈ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ